

22
ՄԱՅԻՍԻ
2020

Luys Lnyu®



ԿԱՐԾԻՔԻ
ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
«ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ».
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ». ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	1
2. ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	2
2.1. Կարծիքի արտահայտման ազատության սահմանադրական ամրագրումը Հայաստանում.....	2
2.2. «Ատելության խոսք» հասկացությունը.....	4
ա) Քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմը	4
բ) «Ատելության խոսքը» միջազգային փաստաթղթերում և մարմինների պրակտիկայում	6
3. ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 226.2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	9
3.1. Իրավական որոշակիության ստուգում	9
3.2. Համաչափության ստուգում.....	11
4. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	14
5. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ	26
5.1. Ավստրիա	26
5.2. Լեհաստան.....	27
5.3. Բուլղարիա	29
5.4. Խորվաթիա	29
5.5. Չեխիա	30
5.6. Գերմանիա	30
6. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ	31

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կարծիքի արտահայտման ազատությունը ժողովրդավարության հիմնասյուներից է և ապահովում է ժողովրդի կամքի ազատ ձևավորումն ու բաց հաղորդակցությունը հասարակության և պետության միջև: Ազատ հանրային կարծիքը գաղափարների փոխանակման և բազմակարծության երաշխիքն է, որի միջոցով էլ իրականացվում է ժողովրդավարությունը:

Կարծիքի արտահայտման ազատությունը երաշխավորված է մի շարք միջազգային փաստաթղթերով և պետությունների հիմնական օրենքներով: Այդ է պատճառը, որ խոսքն ազատ արտահայտելու և տարածելու իրավունքը հանդես է գալիս նաև որպես երկրում ժողովրդավարական արժեքների նկատմամբ հարգանքի յուրահատուկ ցուցիչ: Կարծիքի արտահայտման ազատությունը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատության իրավունքները:

Կարծիքի արտահայտման ազատությունը բացարձակ իրավունք չէ, և ինչպես ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային փաստաթղթերով սահմանվել են և դատական պրակտիկայում զարգացել մի շարք հիմքեր, որոնց պարագայում կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել: Խոսքի ազատության իրավունքի իրավաչափ սահմանափակման հիմքերից մեկը «ատելության խոսքն» է, որն արգելված է Եվրոպայի խորհրդի անդամ մի շարք երկրներում: Առանձին երկրներում այն առաջացնում է անգամ քրեական պատասխանատվություն: Այնուամենայնիվ, չկա «ատելության խոսք» հասկացության վերաբերյալ միջազգայնորեն ճանաչված սահմանում, ինչի պարագայում ատելության խոսքի հնարավոր լայն մեկնաբանությունը կարող է հանգեցնել խոսքի ազատության անհամաչափ սահմանափակման:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը 2020թ. ապրիլի 15-ին ընդունել է «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքը¹, որով քրեական պատասխանատվություն է նախատեսվում բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու և քարոզելու համար (միջազգայնորեն հայտնի է որպես «ատելության խոսք» կամ անգլերեն՝ “hate speech”)²:

¹ ՀՕ-231-Ն, ՀՀՊՏ 2020.05.06/47(1602), հոդ.544:

² ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 226.2:

Հետազոտության շրջանակներում վերլուծության է ենթարկվել ատելության խոսքի քրեականացման իրավաչափությունը՝ այն դիտարկելով կարծիքի արտահայտման ազատության ու դրա սահմանափակման իրավաչափության համատեքստում (մաս 2 և 3), ինչպես նաև ներկայացվում են ատելության խոսքի սահմանափակման հարցում միջազգային փաստաթղթերի կարգավորումներն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան (մաս 4) և այլ երկրների փորձառությունը (մաս 5):

2. ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

2.1. Կարծիքի արտահայտման ազատության սահմանադրական ամրագրումը Հայաստանում

Միջազգայնորեն ճանաչված մոտեցումներին համահունչ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության³ 2-րդ գլուխը որպես մարդու հիմնական իրավունք է ամրագրում **կարծիքի արտահայտման ազատության իրավունքը** (հոդված 42):

Արտահայտման ազատության իրավունքը բնութագրելու համար օգտագործվում է երկու եզրույթ՝ «կարծիքն արտահայտելու իրավունք» և «խոսքի ազատության իրավունք»: Տպավորություն է ստեղծվում, որ խոսքը երկու տարբեր իրավունքների մասին է՝ կարծիքն ազատ արտահայտելու և խոսքի ազատության: Մինչդեռ միջազգային փաստաթղթերում և դատական պրակտիկայում այն մեկ ամբողջական իրավունք է⁴, որը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց հանրային իշխանության միջամտության և անկախ պետական սահմաններից: Այսինքն՝ տարբերությունը միայն եզրութաբանական է, և իրավունքի բովանդակության ծավալը դրանից չի փոխվում⁵:

³ Ընդունվել է հանրաքվեի միջոցով 2015թ. դեկտեմբերի 6-ին, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում հոդված 1118:

⁴ ՄԻԵԿ 10-րդ հոդված, Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 11-րդ հոդված:

⁵ Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, Երևան 2016, էջ 58:

Հոդված 42. Կարծիքի արտահայտման ազատությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:
2. Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը:
3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

42-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը ունի մի շարք բաղադրիչներ՝

- սեփական կարծիք ունենալու իրավունք,
- առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ՝
 - փնտրելու իրավունք,
 - ստանալու իրավունք
 - դրանք տարածելու ազատություն:

Սահմանադրությամբ երաշխավորված կարծիքի արտահայտման ազատության իրավունքը բացարձակ իրավունք չէ և կոնկրետ պայմաններում կարող է սահմանափակվել: 42-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է կարծիքի արտահայտման ազատության *սահմանափակման ձևն ու հիմքերը*:

Համաձայն նշված սահմանադրական նորմի՝ կարծիքի արտահայտման ազատության իրավունքի սահմանափակման ձևական պահանջը այն է, որ սահմանափակումը կարող է իրականացվել միայն **օրենքով**: Օրենքը կարող է նախատեսել կարծիքի ազատության սահմանափակում միայն Սահմանադրությամբ ուղղակորեն մատնանշված արժեքների պաշտպանության նպատակներով: Դրանք են՝

- պետական անվտանգությունը,

- հասարակական կարգը,
- առողջությունն ու բարոյականությունը,
- այլոց պատիվն ու բարի համբավը,
- այլ հիմնական իրավունքներն ու ազատությունները:

Միաժամանակ, Սահմանադրությունը հատուկ պահանջներ է առաջադրում կարծիքի արտահայտման ազատության իրավունքի սահմանափակումներին: Նման սահմանափակումները պետք է լինեն՝

- համաչափ (հոդված 78),
- որոշակի (հոդված 79),
- չխաթարեն կարծիքն արտահայտելու ազատության էությունը (հոդված 80)⁶:

Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է կարծիքի արտահայտման ազատության իրավունքի սահմանափակման համար մեկ այլ կարևոր չափորոշիչ, համաձայն որի՝ սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները: Այս առումով, կարծիքի արտահայտման ազատության վերաբերյալ դրույթներ են պարունակում, մասնավորապես՝

- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը⁷ (հոդված 29),
- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան⁸ (հոդված 10, մաս 2),
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը⁹ (հոդված 19, մաս 3):

2.2. «Ատելության խոսք» հասկացությունը

ա) Քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմը

Ազգային ժողովի կողմից 2020թ. ապրիլի 15-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքով նախատեսվեց քրեական

⁶ Այս պահանջների գնահատման անդրադարձ է կատարվում ստորև՝ 3-րդ՝ «Քրեական օրենսգրքի 226.2-րդ հոդվածի սահմանադրաիրավական գնահատումը» մասում:

⁷ Ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովի կողմից 1948թ. դեկտեմբերի 10-ին, 217 Ա III:

⁸ Ընդունվել է Եվրոպայի խորհրդի կողմից 1950թ. նոյեմբերի 4-ին, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 26.04.2002, ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/5(13):

⁹ Ընդունվել է ՄԱԿ-ի կողմից 1996թ. դեկտեմբերի 16-ին, 2200 Ա XXI, ՀՀՊՏ 1997.12.25/29:

պատասխանատվություն բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու համար (հոդված 226.2):

Հոդված 226.2. Բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը

1. Անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական կամ սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ, գույքային վիճակով, ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով, 226-րդ, 226.1-ին, 301-րդ, 385-րդ, 397.1-ին հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից.

2) պաշտոնական դիրքն օգտագործելով՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրիսնապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ առատազուրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով՝ ոռոջանի առաջնորդներ

226.2.-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի դիսպոզիցիայից կարող ենք եզրահանգել, որ օրենսդիրը ատելության խոսք է համարել անձի կամ անձանց խմբի նկատմամբ **բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը**, եթե դրանք պայմանավորված են՝

- սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական, կամ սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով,
- կրոնով, աշխարհայացքով,
- քաղաքական կամ այլ հայացքներով,
- ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ,
- գույքային վիճակով, ծնունդով,
- հաշմանդամությամբ, տարիքով կամ
- անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով:

բ) «Արեւելոյցան խոսքը» միջազգային փաստաթղթերում և մարմինների պրակտիկայում

Ատելւոյցան խոսքի վերաբերյալ միջազգայնորեն ճանաչված սահմանում չկա, սակայն Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն (այսուհետ՝ ԵԽ Նախարարների կոմիտե) թիվ R (97) 20 հանձնարարականում¹⁰ ատելւոյցան խոսքը բնորոշել է որպէս. «Արտահայտման այն բոլոր ձևերը, որոնք տարածում, հրահրում, նպաստում կամ արդարացնում են ռասայական ատելւոյցունը, օտարապաշարւոյցունը (xenophobia), հակասեմիթիզմը կամ անհանդուրժողականութեան վրա հիմնված ատելւոյցան այլ ձևերը. անհանդուրժողականութիւն, որն արտահայտվում է ագրեսիվ ազգայնականութեամբ կամ էթնոկենտրոնիզմով, խտրականութեամբ և թշնամութեամբ փոքրամասնութիւնների, ներգաղթյալների և ներգաղթյալներից ծագում ունեցող մարդկանց նկատմամբ»¹¹:

Այս բնորոշումը առանձին դեպքերում ելակետային է եղել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համար:

«Ռասայական խտրականութեան բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի¹² 4-րդ հոդվածով սահմանված է, որ օրենքով պատժելի հանցանք են համարվում ռասայական գերազանցութեան կամ ռասայական ատելւոյցան վրա հիմնված գաղափարների տարածումը, ռասայական խտրականութեան հրահրումը, ինչպէս նաև ցանկացած ռասայի կամ մաշկի այլ գոյն կամ էթնիկական այլ ծագում ունեցող անձանց խմբի դեմ ուղղված բռնութեան գործողութիւնները կամ դրանց հրահրումը, ինչպէս նաև ռասիստական գործունեութեանն օգնութիւն տրամադրելը, ներառյալ՝ նման գործունեութեան ֆինանսավորումը:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի հիման վրա ստեղծված Ռասայական խտրականութեան վերացման կոմիտեն արձանագրել է, որ չնայած Կոնվենցիայի

¹⁰ Council of Europe, Committee of ministers, Recommendation No. R (97) 20, on "Hate speech," (Adopted by the Committee of Ministers on 30 October 1997 at the 607th meeting of the Ministers' Deputies (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680505d5b>):

¹¹ Erbakan v. Turkey Erbakan v. Turkey, Application no.59405/00, Judgment 6th July 2006, կետ 56: Gunduz v. Turkey Gunduz v. Turkey, Application no. 35071/97, Judgment 4th December 2003, կետ 22:

¹² Ընդունվել է 21.12.1965թ., Հայաստանի Հանրապետութեան համար ուժի մեջ է մտել 1993 թ. հուլիսի 23-ին, ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/4(12):

վերոհիշյալ 4-րդ հոդվածով նախատեսված է, որ վարքի որոշակի դրսևորումներ (ռասայական գերազանցության կամ ռասայական ատելության վրա հիմնված գաղափարների տարածումը, ռասայական խտրականության հրահրումը և այլն) պետք է համարվեն օրենքով պատժելի հանցագործություններ, այնուամենայնիվ Կոնվենցիայով չկա այդ գործընթացի վերաբերյալ մանրամասն ուղեցույց:

Այս առումով Ռասայական խտրականության վերացման կոմիտեն ուշադրություն է հրավիրել հետևյալ հանգամանքների վրա¹³.

- **Խոսքի բովանդակությունը և արտահայտման ձևը.** արդյո՞ք խոսքը սադրիչ (հրահրող) և նպատակաուղղված է, ինչ բովանդակություն ունի այն և ինչպես է այն արտահայտվում:
- **Տնտեսական, սոցիալական և քաղաքական համատեքստը, որոնց պայմաններում և ժամանակ ասվել ու տարածվել է նման խոսքը:** Քննարկումները, որոնք մի համատեքստում վտանգավոր չեն կամ չեզոք են, մեկ այլ համատեքստում կարող են ունենալ վտանգավոր հետևանքներ: Ցեղասպանության վերաբերյալ իր ցուցիչներում Ռասայական խտրականության վերացման կոմիտեն ընդգծել է տեղանքի կարևորությունը ռասիստական ատելության խոսքի իմաստն ու հնարավոր հետևանքները գնահատելիս:
- **Հասարակության մեջ խոսողի դիրքը կամ կարգավիճակը և լսարանը, որին ուղղված է ելույթը:** Կոմիտեն հետևողականորեն ուշադրություն է դարձնում քաղաքական գործիչների և այլ հասարակական կարծիքի ձևավորողների դերին Կոնվենցիայով պաշտպանված խմբերի նկատմամբ բացասական մթնոլորտի ստեղծմանը նպաստելու գործում և նման անձանց և մարմիններին խրախուսում է դրական մոտեցումներ որդեգրել՝ ուղղված միջմշակութային փոխըմբռնման և ներդաշնակության խթանմանը:
- **Խոսքի տարածվածությունը, ներառյալ՝ լսարանը, որին ուղղված է այդ խոսքը և տարածման միջոցները.** արդյո՞ք խոսքը տարածվել է ՉԼՄ-ների կամ համացանցի միջոցով և տարածման հաճախականությունը և լսարանը:

¹³ UN Committee on the Elimination of Racial Discrimination, General recommendation No. 35: Combating racist hate speech, CERD/C/GC/35, հրապարակվել է 2013թ. սեպտեմբերի 23-ին (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/docid/53f457db4.html>):

- **խոսքի նպատակը.** խոսքը, որը պաշտպանում է անձի կամ անձանց խմբի իրավունքները, չպետք է լինի քրեական կամ այլ պատասխանատվության առարկա:

ՄԱԿ-ի խոսքի ազատության հարցերով հատուկ զեկուցողը, ԵԱՀԿ մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչը և Ամերիկյան պետությունների կազմակերպության (ԱՊԿ) խոսքի ազատության հարցերով հատուկ հանձնակատարը իրենց համատեղ հայտարարությամբ կոչ են արել ատելության խոսքի վերաբերյալ օրենսդրական կարգավորումները սահմանել հստակ և նեղ՝ կիրառման ընթացքում չարաշահումներից զերծ լինելու համար: Համատեղ հայտարարության մեջ նաև նշվում է՝

- ոչ ոք չպետք է պատասխանատվության ենթարկվի հայտարարությունների համար, որոնք ճշմարիտ են,
- ոչ ոք չպետք է պատժվի «ատելության խոսքի» տարածման համար, քանի դեռ չի ապացուցվել, որ արվել է խտրականության, թշնամանքի կամ բռնությունների հրահրման համար,
- պետք է հարգվի լրագրողների իրավունքը՝ որոշելու, թե ինչպես պետք է լավագույնս տեղեկատվությունը ներկայացվի հասարակությանը, մասնավորապես, երբ դա վերաբերում է ռասիզմի և անհանդուրժողականության վերաբերյալ տեղեկատվությանը,
- ոչ ոք չպետք է ենթարկվի գրաքննության,
- դատարանների կողմից պատժամիջոցների ցանկացած կիրառումը պետք է համապատասխանի համաչափության սկզբունքին¹⁴:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարը նշել է, որ ատելության հրահրման վերաբերյալ ընդունվող օրենսդրական կարգավորումները մասամբ խնդրահարույց են, օրենքի այնպիսի հիմնական դրույթների հստակության բացակայության պատճառով, ինչպիսիք են՝ *հրահրում, արելություն և արելության խոսք*¹⁵:

¹⁴ Joint Statement on Racism and the Media by the UN Special Rapporteur on Freedom of Opinion and Expression, the OSCE Representative on Freedom of the Media and the OAS Special Rapporteur on Freedom of Expression, London, 27 February 2001 (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.osce.org/fom/40120?download=true>):

¹⁵ Study of the United Nations High Commissioner for Human Rights compiling existing legislations and jurisprudence concerning defamation of and contempt for religions, UN Doc. A/HRC/9/25, 5 September 2008, para. 24. (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.refworld.org/docid/48e61dc72.html>):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր դատական պրակտիկայում հստակ ընդգծել է, որ կարծիքը կարող է արտահայտվել ոչ միայն խոսքերի միջոցով, այլ կարող է դրսևորվել նաև անխոս՝ ժեստեր, խորհրդանիշներ, լուսանկարներ և ուրիշ պատկերներ ցուցադրելու, ծաղրանկարների, կարճ հաղորդագրությունների, որևէ բանի համար ստորագրություններ հավաքելու և բնականաբար՝ տպագիր ու էլեկտրոնային լրատվական միջոցները ընդհուպ համացանցը օգտագործելու և այլ միջոցներով¹⁶:

3. ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 226.2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԽՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

2015թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ առաջին անգամ ուղղակիորեն ամրագրվեցին հիմնական իրավունքների պաշտպանության համար հիմնարար նշանակություն ունեցող *համաչափության և որոշակիության* սկզբունքները: Նշված Սահմանադրական սկզբունքները օրենսդրի առջև դրեցին որոշակի պահանջներ, այն է՝

- օրենք ընդունելիս օրենսդիրը կարող է հետապնդել միայն Սահմանադրությամբ սահմանված նպատակ,
- հետապնդվող նպատակին հասնելու համար ընտրված միջոցը պետք է լինի պիտանի, անհրաժեշտ և համաչափ (*համաչափության սկզբունք*),
- օրենքի փաստակազմը և իրավական հետևանքը բովանդակային տեսանկյունից պետք է լինեն այնքան որոշակի, որ հնարավորություն տան հիմնական իրավունքի կրողին և հասցեատիրոջը դրսևորելու համապատասխան վարքագիծ (*որոշակիության սկզբունք*):

Ստորև կվերլուծենք, թե որքանով է ՀՀ քրեական օրենսգրքի 226.2 հոդվածը համապատասխանում Սահմանադրության վերոհիշյալ պահանջներին:

3.1. Իրավական որոշակիության ստուգում

Համաձայն Սահմանադրության 79-րդ հոդվածի՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

¹⁶ Տե՛ս A. Schabas, The European Convention on Human Rights, Oxford University Press, published in 2015, էջ 455-456:

Սահմանադրության 79-րդ հոդվածի գործառույթը նրանում է, որպեսզի երաշխավորի, որ հիմնական իրավունքի սահմանափակում նախատեսող օրենքը լինի այնպիսին, որ հիմնական իրավունքի կրողն ի վիճակի լինի հասկանալու, թե ի վերջո իր կողմից դրսևորվող որ վարքագիծը կարող է հանգեցնել համապատասխան (տվյալ դեպքում՝ քրեաիրավական) հոդվածով նախատեսված պատասխանատվությանը:

Քրեական օրենսգրքի 226.2-րդ հոդվածն այս առումով իր մեջ պարունակում է երկու եզրույթ, որոնք կարող են կասկածի տակ դնել ողջ կարգավորման որոշակիությունը: Դրանք են՝ «բռնություն» և «հրապարակային» եզրույթները:

«Բռնություն» եզրույթը դատական պրակտիկայում¹⁷ ստացել է բավական հստակ եզրագծեր: Այն, ըստ էության, ներկայացվում է որպես արտաքին հարկադրանքի միջոցների կիրառում: Այս տեսանկյունից և 226.2-րդ հոդվածի լույսի ներքո կարելի է պնդել, որ, օրինակ՝ որևէ կրոնական կազմակերպության դեմ արված կոչը՝ արտաքին հարկադրանքի միջոցներ (բռնություն) կիրառելու, կառաջացնի որոշակի իրավական հետևանքներ:

- Հետևաբար, կարելի է եզրահանգել, որ Քրեական օրենսգրքի 226.2-րդ հոդվածում տեղ գտած «բռնություն» եզրույթն այս առումով բավարար չափով որոշակի է:

«Հրապարակային» եզրույթը ևս օգտագործվում է Քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներում (օրինակ՝ հոդվածներ 144, 196, 204, 226.1, 301, 385): Թեև «հրապարակային» եզրույթի պոզիտիվ սահմանում դժվար է տալ, այնուամենայնիվ կարելի է օգտվել այսպես կոչված «բացասական սահմանման» հնարավորությունից, ըստ որի՝ հրապարակային չէ այն կոչը, որն ուղղված է խիստ որոշակի շրջանակով անձանց և չունի հնարավորություն՝ լսվելու և ընկալելի լինելու անորոշ շրջանակով անձանց կողմից: Եթե ընդունում ենք վերոհիշյալ (բացասական) սահմանումը՝ որպես «հրապարակային» եզրույթի սահմանում, ապա քաղաքացու համար կրկին պարզ է, թե որ պարագայում իր դրսևորած վարքագիծը կդիտարկվի որպես քրեորեն հետապնդելի արարք:


- Հետևաբար, «հրապարակային» եզրույթը ևս կարելի է դիտարկել Սահմանադրության 79-րդ հոդվածին համահունչ:

¹⁷ Արևիկ և Ծովինար Սահակյանների գործով Վճռաբեկ դատարանի 2012թ. նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշման 18-րդ կետ:

Արդյունքում կարելի է եզրահագել, որ Քրեական օրենսգրքի 226.2-րդ հոդվածը համապատասխանում է որոշակիության սկզբունքի պահանջներին:

3.2. Համաչափության ստուգում

Համաձայն Սահմանադրության 78-րդ հոդվածի՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է *պիտանի* և *անհրաժեշտ* լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է *համարժեք* լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը: Այսպիսով, Սահմանադրության 78-րդ հոդվածի իմաստով՝



• Նպատակի իրավաչափությունը

Քանի որ Քրեական օրենսգրքի 226.2-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը վերաբերում է անձի կողմից կոնկրետ ձևի կոչ անելու սահմանափակմանը, ապա կարող

ենք պնդել, որ շոշափվում է Սահմանադրության 42-րդ հոդվածով սահմանված կարծիքի ազատ արտահայտման հիմնական իրավունքի պաշտպանության առարկան: Սակայն, ինչպես գրեթե ցանկացած հիմնական իրավունք, կարծիքի արտահայտման իրավունքը ևս բացարձակ չէ և ենթակա է սահմանափակման: Ընդ որում սահմանափակման հիմքերը (լեգիտիմ նպատակը) սահմանված են հենց Սահմանադրությամբ, մասնավորապես՝ 42-րդ հոդվածի 3-րդ մասով, որը մատնանշում է պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակները:

- *Հետևաբար, Քրեական օրենսգրքի 226.2-րդ հոդվածով հետապնդվում է առնվազն այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակը: Հետևաբար, **լեգիտիմ նպատակ առկա է:***

• Միջոցի պիտանիություն

Միջոցը, որն այստեղ հանդիսանում է Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենքը, պիտանի է, եթե այն օժանդակում է լեգիտիմ նպատակի իրականացմանը: Այս պարագայում, եթե օրենքն ընդունվի, կարելի է ելնել այն ողջամիտ կանխավարկածից, որ այն կունենա ոչ միայն ռեպրեսիվ ազդեցություն, այլ նաև՝ պրևենտիվ (կանխարգելիչ):

- *Հետևաբար, **ընտրված միջոցը նաև կարելի է դիտարկել որպես պիտանի:***

• Միջոցի անհրաժեշտություն

Ընտրված միջոցը (Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենքը) անհրաժեշտ է, եթե չկա ավելի մեղմ միջոց, որը նույնպիսի արդյունավետությամբ կօժանդակի լեգիտիմ նպատակի իրականացմանը:

Որպես ավելի մեղմ միջոց կարելի է դիտարկել Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին համապատասխան հոդվածի կարգավորումը վարչական իրավախախտումների ոլորտում՝ նախատեսելով վարչական տույժի նշանակում: Այս դեպքում թե՛ ռեպրեսիվ, թե՛ պրևենտիվ ֆունկցիաները կարելի է դիտել իրականացված:

Մյուս կողմից, սակայն, հարց է առաջանում, թե արդյո՞ք այդ պարագայում նույնպիսի արդյունավետությամբ հնարավոր կլինի պայքարել ատելության խոսքի դեմ: Վարչական տույժի չափը բարձր սահմանելով հնարավոր կլինի նպաստել անձանց զգոնության բարձրացմանը, քանի որ բարձր վարչական տույժի առկայության դեպքում անձը պետք է հաշվի նստի, որ կարող են առաջանալ բավականին ծանր ֆինանսական հետևանքներ: Սակայն, վարչական իրավախախտման ձևով հարցը կարգավորելիս պետք է հաշվի առնել նաև, որ բացի ֆինանսական առումով բացասական հետևանքներից, այն այլ հետևանքներ չի առաջացնում, ինչպիսին է օրինակ՝ դատվածությունը (Քրեական օրենսգրքի հոդված 84): Այս առումով, Քրեական օրենսգրքում համապատասխան հանցակազմի կարգավորումը պրևենտիվ իմաստով ավելի արդյունավետ է, քան, եթե այն կարգավորվի օրինակ՝ Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում:

➤ *Հեղևաբար, լեզիտիմ նպատակ հետապնդող միջոցը կարելի է դիտարկել նաև որպես անհրաժեշտ:*

• Միջոցի համարժեքություն

Համաձայն Սահմանադրության 78-րդ հոդվածի 2-րդ նախադասության՝ [հիմնական իրավունքների] սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը: Մի կողմից՝ խոսքը գնում է մարդու անձնական ազատության իրավունքի մասին (Սահմանադրության հոդված 27): Լիբերալ հասարակարգում անձնական ազատության իրավունքն առանցքային նշանակություն ունի, որի սահմանափակման հիմքերը սպառիչ թվարկված են Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասում: Մյուս կողմից՝ մարդու պատիվն ու բարի համբավը ևս համարվում են մարդակենտրոն¹⁸ Սահմանադրության հիմնասյուները: Այդ իսկ պատճառով վերացական առումով գործ ունենք հավասար մակարդակների վրա գտնվող հիմնական իրավունքների հետ: Քրեական օրենսգրքի 226.2-րդ հոդվածի տեսանկյունից, սակայն, կարելի է հակադարձել, որ որպես պատիժ նախատեսված է ոչ միայն ազատազրկումը, այլև՝ տուգանքը: Այս առումով օրենսդիրը հայեցողական դաշտ է բացել դատական

¹⁸ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

իշխանության համար, որի շրջանակներում վերջինս կարող է անձի մեղքի աստիճանին համահունչ վճիռ կայացնել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է եզրահանգել, որ կարծիքի արտահայտման և մարդու անձնական ազատության հիմնական իրավունքները կոնկրետ այս դեպքում պետք է հանդուրժեն այլոց պատիվն ու բարի համբավը պաշտպանելու նպատակով օրենսդրի կողմից Քրեական օրենսգրքում համապատասխան հանցակազմի ներառումը:

- Հետևաբար, Քրեական օրենսգրքի 226.2-րդ հոդվածը **կարելի է դիտել որպես համարժեք՝** սահմանափակվող հիմնական իրավունքների և ազատությունների նշանակությունը:

Վերոշարադրյալի արդյունքում, կարելի է եզրահանգել, որ Քրեական օրենսգրքի 226.2-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրության 78-րդ հոդվածի՝ համաչափության սկզբունքի պահանջներին:

4. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Սահմանադրությունում ամրագրված դրույթները, այդ թվում՝ կարծիքի արտահայտման ազատության իրավունքը մեկնաբանելիս, պետք է հաշվի առնենք նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան¹⁹: Այդպիսի մարմիններից է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ), որի պրակտիկան կարող է շատ արժեքավոր և կողմնորոշիչ լինել իրավակիրառների համար, քանի որ Հայաստանի Հանրապետությունում նման կարգավորումները նորույթ են:

Ի վերջո, Հայաստանի Հանրապետության կողմից կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման իրավաչափությունը կարող է դառնալ ՄԻԵԴ քննության առարկա և այս առումով ևս ՄԻԵԴ պրակտիկան կարող է ուղղորդիչ լինել

¹⁹ ՀՀ Սահմանադրություն, հոդված 81:

Հայաստանի Հանրապետության համար, որպեսզի հետագայում վերջինիս դեմ միջազգային ատյանների կողմից վճիռներ չկայացվեն:

ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ ժողովրդավարական և բազմակարծիք հասարակությունը հիմնված է բոլոր մարդկանց արժանապատվության հավասար հարգանքի և հանդուրժողականության վրա: Այդ պատճառով որոշ ժողովրդավարական հասարակություններում կարող է անհրաժեշտ լինել կանխարգելել կամ նույնիսկ պատասխանատվություն սահմանել ատելության խոսքի ցանկացած դրսևորման համար, որոնք տարածում, հրահրում, նպաստում կամ արդարացնում են անհանդուրժողականությունը: Միաժամանակ, ՄԻԵԴ-ը նշում է, որ իշխանությունների կողմից կիրառված ցանկացած ձևական պահանջները, պայմանները, սահմանափակումները կամ պատիժները պետք է համաչափ լինեն հետապնդվող օրինաչափ նպատակին հասնելու համար²⁰:

ՄԻԵԴ-ը ատելության խոսքի հիմքով պատասխանատվության ենթարկված անձանց դիմումների առնչությամբ մշակել է արտահայտման ազատության իրավունքին միջամտության իրավաչափությունը ստուգելու 4 քայլից բաղկացած սխեմա.

1. Արդյո՞ք այն մեկնաբանությունները և/կամ արտահայտման այլ ձևերը, որոնց համար անձը դատապարտվել է ազգային դատարանի կողմից, պաշտպանվում են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (ստորև՝ ՄԻԵԿ) 10-րդ հոդվածով:
2. Եթե այո, ապա արդյո՞ք ՄԻԵԿ-ով պաշտպանված իրավունքին միջամտությունը **նախատեսված է եղել օրենքով**:
3. Արդյո՞ք միջամտությունը հետապնդել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ *պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու* նպատակ:
4. Արդյո՞ք այդ միջամտությունը **անհրաժեշտ է եղել** ժողովրդավարական հասարակությունում 3-րդ կետով նշված նպատակներին հասնելու համար, իսկ

²⁰ Erbakan v. Turkey, Application No(s).[59405/00](#), judgment of 6 July 2006, կետ 56:

այդ նպատակներին հասնելու համար ընտրված միջոցները՝ **պիտանի և համաչափ**:

1

• **Արդյո՞ք առկա է կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված արտահայտվելու ազատության իրավունքին միջամտություն**

ՄԻԵԴ-ը իր պրակտիկայում հստակ ընդգծել է, որ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ և խտրականության արգելքի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության խոսքը դուրս է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված կարծիքի ազատության պաշտպանությունից: Մի շարք գործերով ՄԻԵԴ-ը, վկայակոչելով Կոնվենցիայի 17-րդ հոդվածը (Իրավունքների չարաշահման արգելում), դիմումատուների բողոքները համարել է անընդունելի:

• **Էթնիկական կամ սոցիալական ծագման հանգամանքով ատելության խոսք**

Pavel Ivanov v. Russia²¹

Դիմումատուն, ով թերթի խմբագիր և սեփականատեր էր, դատապարտվել էր զանգվածային լրատվության միջոցով էթնիկական, ռասայական և սոցիալական հիմքով ատելության խոսքի տարածման համար: Նա հեղինակել և հրատարակել էր մի շարք հոդվածներ, որոնք հրեաներին ներկայացնում էին Ռուսաստանում որպես չարիքի աղբյուր՝ կոչ անելով նրանց դուրս մղել սոցիալական կյանքից: Նա իր հոդվածներով մի ամբողջ էթնիկական խմբի մեղադրում էր ռուս ժողովրդի դեմ դավադրություն պլանավորելու մեջ և ֆաշիստական գաղափարախոսությունը վերագրում էր հրեական ղեկավարությանը: Թե՛ իր հրապարակումներում և թե՛ դատական քննության ընթացքում նրա բանավոր պնդումներում, նա հետևողականորեն հերքում էր հրեաների ազգային արժանապատվության իրավունքը՝ պնդելով, որ նրանք ազգ չեն կարող համարվել: Դիմումատուն մասնավորապես բողոքել էր, որ իր դատապարտումը ռասայական ատելություն հրահրելու համար արդարացված չի եղել:

²¹ Pavel Ivanov v. Russia, application no. [35222/04](#), Judgment of 20 February 2007:

Դատարանը Դիմումատուի բողոքը համարել էր անընդունելի՝ նշելով, որ մեկ էթնիկ խմբի նկատմամբ այդպիսի ընդհանուր և բուռն հարձակումը ուղղված է Կոնվենցիայի հիմնարար արժեքների, մասնավորապես՝ հանդուրժողականության, սոցիալական խաղաղության և խտրականության արգելքի դեմ: Հետևաբար, Կոնվենցիայի 17-րդ հոդվածի (Իրավունքների չարաշահման արգելում) հիմքով, Դիմումատուն չի կարող օգտվել Կոնվենցիայի 10-րդ հոդվածով (արտահայտվելու ազատություն) տրամադրվող պաշտպանությունից:

➤ ***Մարդկության դեմ իրականացված հանցագործությունների ժխտման հանգամանքով արելության խոսք***

ՄԻԵԴ պրակտիկան վկայում է, որ պատմական իրադարձությունների վերաբերյալ կատարված հայտարարություններին միջամտելու անհրաժեշտությունը յուրաքանչյուր դեպքում ենթակա է առանձին գնահատման: Դա պայմանավորված է հայտարարության և հնարավոր հետևանքների միջև պատճառահետևանքային կապով, ինչպես նաև այն համատեքստով, որում արվել է նման հայտարարությունը:

***Garaudy v. France*²²**

Դիմումատուն, ով «Ժամանակակից Իսրայելի հիմնադրման առասպելը» գրքի հեղինակն էր, դատապարտվել էր մարդկության դեմ իրականացված հանցագործությունները ժխտելու, հանրայնորեն մի խումբ անձանց, տվյալ դեպքում՝ հրեական համայնքին գրպարտելու և ռասայական ատելության հրահրման համար: ՄԻԵԴ-ը Դիմումատուի բողոքը համարել է անընդունելի: Դատարանը եզրահանգել էր, որ Դիմումատուի դատողությունների բովանդակությունը հանգում են Հոլոքոստի ժխտմանը և շեշտել էր, որ մարդկության դեմ իրականացված հանցագործությունների ժխտումը (Հոլոքոստի ժխտումը) հանդիսանում է հրեաների նկատմամբ ռասայական խտրականության դրսևորման ամենածանր ձևերից մեկը և նրանց նկատմամբ հրահրում է ատելություն: Հստակ ճանաչված պատմական իրադարձությունները ժխտելը չի հանդիսանում գիտական կամ պատմական վերլուծություն: Ըստ ՄԻԵԴ-ի՝ քանի որ

²² Garaudy v. France, Application no. [65831/01](#), Judgment of 24 June 2007:

Դիմումատուի նման գործողությունները անհամատեղելի են Կոնվենցիայով խրախուսվող հիմնական արժեքների հետ, ուստի ղեկավարվելով Կոնվենցիայի 17-րդ հոդվածով՝ եզրահանգեց, որ Դիմումատուն իրավունք չունի վկայակոչել Կոնվենցիայի 10-րդ հոդվածով (արտահայտվելու ազատությանը) նախատեսված պաշտպանությունը:

***Perinçek v. Switzerland*²³**

Մեկ այլ գործով, որի դիմումատուն էր Թուրքիայի «Աշխատավորական» կուսակցության նախագահ Դոդու Փերինչեքը, ՄԻԵԴ-ի քննության առարկա է դարձել այն հարցը, թե արդյո՞ք Հայոց ցեղասպանության ժխտման համար քրեական պատասխանատվություն սահմանելը խախտում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված խոսքի ազատության իրավունքը: Շվեյցարիայում հրապարակային ելույթների ժամանակ Փերինչեքը հերքել էր 1915 թ. և հետագա տարիներին հայ ժողովրդի նկատմամբ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ցեղասպանության փաստը: Նա, մասնավորապես, հայկական ցեղասպանությունը որակել է որպես «միջազգային կեղծիք»: Որից հետո Շվեյցարիա-Հայաստան միությունը բողոք էր ներկայացրել Փերինչեքի դեմ՝ վերոհիշյալ ելույթների բովանդակության կապակցությամբ: Այդ բողոքի հիման վրա Լոզանի դատարանը 2007 թվականին Դոդու Փերինչեքին մեղավոր էր ճանաչել Շվեյցարիայի քրեական օրենսգրքի՝ ռասայական խտրականության համար պատասխանատվություն նախատեսող հոդվածի համաձայն: Դիմելով ՄԻԵԴ՝ Դոդու Փերինչեքը պնդել էր, որ շվեյցարական դատարանները, Հայոց ցեղասպանությունը ժխտելու մասին հրապարակային հայտարարությունների համար իրեն դատապարտելով, խախտել են Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իր խոսքի ազատությունը:

ՄԻԵԴ-ն, անդրադառնալով Դոդու Փերինչեքի կողմից արված հայտարարություններին և զուգահեռներ անցկացնելով Հոլոքոստի և Հայոց ցեղասպանության միջև, նշել է՝

- Այն երկրներում, որտեղ Հոլոքոստի ժխտման համար նախատեսված է քրեական պատասխանատվություն, դա առավելապես պայմանավորված է ոչ թե այն հանգամանքով, որ դա պատմականորեն հաստատված փաստ է, այլ՝ պատմական համատեքստով: Մասնավորապես, ինչպես վկայում է դատական պրակտիկան մի շարք երկրներում (Ավստրիա, Բելգիա, Գերմանիա և

²³ Perinçek v. Switzerland, Application no. [27510/08](#), Judgment of 15 October 2015:

Ֆրանսիա) Հոլոքոստի ժխտումը, եթե դա անգամ իրականացվում է որպես գիտական ուսումնասիրություն, միշտ առաջացնում է հակաժողովրդավարական գաղափարախոսություն և հակասեմականություն: Նման մոտեցումը պայամանավորված է նաև նրանով, որ Հոլոքոստի ժխտումը կրկնակի անգամ վտանգավոր է այն երկրներում, որոնք վերապրել են նացիստական սարսափները. Հոլոքոստի ժխտման համար օրենքով պատասխանատվություն սահմանելը կարող է դիտարկվել նաև որպես բարոյական պարտականություն:

- ՄԻԵԴ-ը գտել է, որ չնայած Փերինչեքի հայտարարություններն շոշափում են իրավական և քաղաքական բնույթի հարցեր, սակայն, անհրաժեշտ է հաշվի առնել այն համատեքստը որտեղ արտահայտվել են: Այն հանգամանքը, որ Դոդու Փերինչեքը նշված հայտարարությունները արել էր հանրային միջոցառումների ժամանակ և դրանք ուղղված էին իր գաղափարակիցներին, ցույց է տալիս, որ նա դրանք արել է՝ որպես քաղաքական գործիչ, այլ ոչ թե որպես պատմաբան կամ գիտնական:
- ՄԻԵԴ նշում է նաև, որ չի վիճարկվում, այն կապը, որն առկա է Շվեյցարիայի և 1915 թ.ին և հաջորդ տարիներին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իրադարձությունների միջև, սակայն, այդ կապը դրսևորվում է միայն Շվեյցարիայում առկա հայ համայնքի ձևավորմամբ:
- Դատարանը նշում է, որ Փերինչեքը այդ հայտարարություններն արել է Օսմանյան կայսրությունից բավական հեռու, ինչպես նաև այդ իրադարձություններից անցել են շուրջ 90 տարի և չկա որևէ փաստ առ այն, որ Փերինչեքի կողմից արված հայտարարությունները Շվեյցարիայում կարող էին հանգեցնել հասարակական անկարգությունների կամ դրանց կարգավորման անհրաժեշտության կամ կարող էին առաջացնել լարվածություն կամ բախումներ հայերի և թուրքերի միջև:

Արդյունքում, ՄԻԵԴ-ը եզրահանգել է, որ Դոդու Փերինչեքի հայտարարություններն առավելապես ունեին հանրային հետաքրքրություն ունեցող հարցերի քննարկման, այլ ոչ թե՝ ատելություն կամ անհանդուրժողականություն տարածելու նպատակ: Հետևաբար, Շվեյցարիայի կողմից Դոդու Փերինչեքին Հայոց ցեղասպանության փաստի հերքման համար դատապարտելը խախտում է վերջինիս Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված խոսքի ազատության իրավունքը:

➤ **Կրոնական պատկանելության հիմքով ատելության խոսք**

Norwood v. The United Kingdom²⁴

Տվյալ գործով Դիմումատուն, ով Բրիտանիայի ազգայնական կուսակցության անդամ էր, իր պատուհանից ցուցադրել էր մի նկար, որի վրա պատկերված էին այրվող Երկվորյակ երկնաքերները և նկարի ներքևի մասում գրված էր՝ “Islam out of Britain – Protect the British People”: Դիմումատուն դատապարտվեց կրոնական խմբի նկատմամբ ատելություն հրահրելու համար: Տվյալ գործով ՄԻԵԴ-ը եզրահանգեց, որ կրոնական խմբի նկատմամբ այդպիսի ընդհանուր և բուռն հարձակումը, որը ամբողջ խմբին նույնականացնում է ահաբեկչական գործողությունների հետ, անհամատեղելի է Կոնվենցիայով հռչակված և երաշխավորված արժեքների հետ, մասնավորապես՝ հանդուրժողականության, սոցիալական խաղաղության և խտրականության արգելքի:

2

• **Արդյո՞ք միջամտությունը նախատեսված է եղել օրենքով**

ՄԻԵԴ-ը տարբեր գործերի շրջանակներում զարգացրել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված «նախատեսված է օրենքով» եզրույթը և հանգել է հետևյալին. «Նորմը չի կարող համարվել «օրենք» **քանի դեռ այն ձևակերպված չէ բավարարորոշակիությամբ, որպեսզի քաղաքացուն հնարավորություն տա կարգավորել իր վարքագիծը:** Նա պետք է ի վիճակի լինի, անհրաժեշտության դեպքում **համապատասխան խորհրդի օգնությամբ,** այդ հանգամանքներում ողջամիտ աստիճանի կանխատեսել այն հետևանքները, որոնց նշված գործողությունը կարող է հանգեցնել»²⁵:

«Օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի: Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր տվյալ գործողության

²⁴ Norwood v. The United Kingdom, Application no. [23131/03](#), judgment of 16 November 2004:

²⁵ Case of Michaud v. France, Application no. 12323/11, judgment of 6 December 2012, § 96:

հետևանքները: Այդ հետևանքները չեն կարող կանխատեսելի լինել բացարձակ որոշակիությամբ: Թեև օրենքում որոշակիությունն առավել ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է²⁶:

3

• Արդյո՞ք միջամտությունը հետապնդել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված նպատակ

Այս առումով ՄԻԵԿ 10-րդ հոդվածի 2-րդ մասով հստակորեն սահմանված են այն նպատակները, ի նպաստ որոնց միայն կարելի է սահմանափակել արտահայտվելու ազատության իրավունքը: Այդ նպատակները պայմանականորեն կարելի է բաժանել 3 խմբի՝

1. **հանրային և պետական շահից բխող իրավունքների պաշտպանություն** (պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջության կամ բարոյականության),
2. **մասնավոր անձանց իրավունքների պաշտպանություն** (այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու),
3. **արդարադատության հեղինակության ու անաչառության պաշտպանություն:**

4

• Արդյո՞ք այդ միջամտությունը անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում վերը նշված նպատակներին հասնելու համար

Այս առումով ՄԻԵԿ նախադեպային իրավունքը հանգում է այն հարցադրմանը, թե արդյո՞ք փաստերը, որոնք ներկայացվել են ազգային իշխանությունների կողմից

²⁶ Case of Busuioc v. Moldova, Application no. 61513/00, judgment of 21 December 2004, § 52:

միջամտությունը հիմնավորելու համար «անհրաժեշտ և պիտանի» են: Այլ կերպ ասած՝ արդյո՞ք դա համապատասխանում է առավել ծանրակշիռ հասարակական կարիքին (pressing social need) և արդյո՞ք այդ նպատակին հասնելու համար օգտագործված միջոցները համաչափ են:

Նշված չափանիշները գնահատելիս ՄԻԵԴ հայեցողության սահման է տալիս ազգային իշխանություններին: Handyside v. The United Kingdom²⁷ գործով ՄԻԵԴ-ը նշել է՝ քանի որ ազգային իշխանությունները ուղղակի և շարունակական շփման մեջ իրենց երկրի կենսական շահերի հետ, հենց նրանք պետք է տան սոցիալական կարիքի անհրաժեշտության վերաբերյալ առաջին գնահատականը:

Հետևապես, Դատարանի նպատակը ոչ թե այն է, որ զբաղեցնի իրավասու ազգային դատարանների տեղը, այլ այն, որ վերանայի վերջիններիս գնահատողական հայեցողությամբ ընդունված որոշումները 10-րդ հոդվածի լույսի ներքո:

ՄԻԵԴ-ը, քննելով արտահայտման ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափությունը 4-րդ տարրի՝ համաչափության տեսանկյունից, ի թիվս այլնի, հաշվի է առնում նաև անձի՝

- **դիտավորությունը,**
- **արտահայտված խոսքի բովանդակությունը,**
- **այն համատեքստը, որում արտահայտվել է այդ խոսքը:**

ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Այս պարագայում հիմնական հարցը, որը դատարանը պարզում է, այն է՝ արդյո՞ք Դիմումատուի նպատակը ատելության խոսքի միջոցով ատելությանը միտված մտքերի և կարծիքների տարածումն է, թե՞ հասարակությանը հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններ հաղորդելը: Այս հարցի պատասխանը հնարավորություն է տալիս տարբերակել այն արտահայտությունները, որոնք չնայած ցնցող կամ վիրավորական են, բայց պաշտպանվում են Կոնվենցիայի 10-րդ հոդվածով, և այն արտահայտությունները, որոնք համատեղելի չեն ժողովրդավարական հասարակությունում:

²⁷ St' u Case of Handyside v. The United Kingdom, Application no. 5493/72, judgment of 7 December 1976, § 48:

Ատելություն խոսք է հանդիսանում այն արտահայտությունը, որը նպատակ ունի տարածել, հրահրել, նպաստել կամ արդարացնել ռասայական ատելությունը, օտարատյացությունը (xenophobia), հակասեմիթիզմը կամ անհանդուրժողականության վրա հիմնված ատելության այլ ձևերը: Անհանդուրժողականությունը, ռասիզմը, հոմոֆոբիան, բռնություն կամ այլ ատելություն հրահրելու կամ խթանելու նման մտադրությունը պետք է տարբերել հանրությանը հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի մասին տեղեկացնելու մտադրությունից: Այս մոտեցումը հստակորեն ընդգծվել է ՄԻԵԴ-ի կողմից *Jersild v Denmark*²⁸ գործով: Գործը վերաբերում է մի լրագրողի, որը վավերագրական ֆիլմ էր պատրաստել և հեռարձակել Դանիայում գործող մի ռասիստական խմբի մասին և այդ ֆիլմը պարունակում էր տվյալ խմբի անդամների մասնակցությամբ կադրեր, որոնք խիստ ռասիստական հայտարարություններ էին անում: Դանիական դատարանի կողմից լրագրողի նշված գործողությունները որակվել էին որպես ատելության խոսքի տարածում, որի համար վերջինս դատապարտվել էր: ՄԻԵԴ-ը, քննության առնելով լրագրողի բողոքը, արձանագրել էր՝ հաշվի առնելով պետությունների կողմից միջազգային մի շարք փաստաթղթերով ստանձնած պարտավորությունը՝ արդյունավետ միջոցներ ձեռնարկելու ռասայական խտրականության բոլոր ձևերը վերացնելու, ինչպես նաև կանխարգելելու և պայքարելու համար, *Դատարանի համար տվյալ գործով դիրքորոշում հայտնելու համար կարևոր կլինի այն հանգամանքը, որ գործը որպես ամբողջություն օբյեկտիվ տեսանկյունից դիտարկելու դեպքում արդյո՞ք նպատակը եղել է ռասիստական հայացքներ և գաղափարներ տարածելը*²⁹: ՄԻԵԴ-ը արձանագրել էր, որ ակնհայտորեն նպատակը եղել է ոչ թե ռասիզմի տարածումը, այլ ընդհակառակը՝ դրա բացահայտումը և վերլուծությունը³⁰: Այսպիսով, ՄԻԵԴ-ը գտել էր, որ լրագրողին դատապարտելը, որը գործել էր առանց ռասիստական մտադրության, հանգեցրել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման:

ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

• Քաղաքական դիսկուրս կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցեր

Դատարանը առանձնահատուկ նշանակություն է տալիս քաղաքական դիսկուրսին (խոսույթ) կամ հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերին, որոնք այն

²⁸ Case of Jersild v. Denmark, Application No. 15890/89. judgment of 23 September 1994:

²⁹ Նույն տեղում, կետ 31:

³⁰ Նույն տեղում, կետ 33:

ուղորտներն են, որտեղ 10-րդ հոդվածի 2-րդ մասը խիստ սահմանափակ հնարավորություն է տալիս արտահայտման ազատությունը սահմանափակելու հարցում³¹: Դատարանը գտնում է, որ այն դեպքերում, երբ արտահայտությունները կվերաբերեն հանրային հետաքրքրություն ունեցող դեպքերին, դատարանը ավելի քիչ հակված կլինի միջամտությունը համարելու անհրաժեշտ: Այսպիսով, դատարանը «կարևորագույն նշանակություն է տալիս խոսքի ազատությանը քաղաքական բանավեճերի համատեքստում և գտնում է, որ քաղաքական դիսկուրսը չպետք է սահմանափակվի առանց շատ մեծ անհրաժեշտության³²:

- **Փաստերի մասին պնդումների և գնահատողական դատողությունների միջև տարբերություն**

ՄԻԵԴ-ը գնում է, որ պետք է տարբերել փաստերը և դրանց վերաբերյալ իրականացված դատողությունները. փաստերը կարելի է ապացուցել, իսկ դրանց վերաբերյալ դատողությունները ենթակա չեն ապացուցման: Դատողության ճշմարտացիության պահանջը անհնարին է իրականացնել, և նման պահանջը ինքնին հակասում է 10-րդ հոդվածով երաշխավորված՝ արտահայտվելու ազատության իրավունքին: Այնուամենայնիվ, երբ արտահայտությունները հանգեցնում են գնահատողական դատողության, պետք է գոյություն ունենան դրա վերաբերյալ բավարար փաստական հիմքեր³³: Դրանով իսկ տարբերություն է դրվում պատմականորեն հստակ հաստատված փաստերի և այն փաստերի միջև, որոնք պատմաբանների բանավեճի առարկա են: Ինչպես արդեն նշել ենք, պատմականորեն հստակ հաստատված փաստերի հերքումը (օրինակ՝ Հոլոքոստի) դուրս է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պաշտպանությունից:

ՀԱՄԱՏԵՔՍ

- **Անձի դերը/կարգավիճակը հասարակության մեջ**

ՄԻԵԴ դիրքորոշումը քաղաքական գործիչների վերաբերյալ

Քանի որ խոսքի ազատության իրավունքը հանդիսանում է ժողովրդավարության հիմնասյուն, ՄԻԵԴ-ը հատուկ կարևորություն է տալիս քաղաքական ազատ

³¹ Case of Erbakan v. Turkey, Application No. [59405/00](#), Judgment of 06 July 2006, կետ 55:

³² Լույն տեղում:

³³ Case of Pedersen and Baadsgaard v. Denmark, Application No. [49017/99](#), Judgment of 17 December 2004, § 76:

բանավեճերին և քաղաքական խոսքի ազատ արտահայտմանը³⁴: Այս համատեքստում ՄԻԵԴ-ը նշել է, որ պետությունների համար Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա տրված է շատ սահմանափակ հնարավորություն քաղաքական խոսքը սահմանափակելու համար³⁵: ՄԻԵԴ-ը նման մոտեցումը բացատրում է նրանով, որ, եթե առանձին դեպքերում տեղի ունենան քաղաքական խոսքի անհամաչափ սահմանափակումներ, ապա այդ ամենը, ի վերջո, կհանգեցնի տվյալ պետությունում խոսքի ազատության իրավունքի սահմանափակմանը³⁶:

ՄԻԵԴ-ը նշել է, որ խոսքի ազատությունը, որը «թանկ է բոլորի համար», «առանձնապես կարևոր է քաղաքական կուսակցությունների և նրանց ակտիվ անդամների համար, ... նրանք ներկայացնում են իրենց ընտրազանգվածը, բարձրաձայնում են վերջիններիս խնդիրների վերաբերյալ և պաշտպանում են նրանց շահերը³⁷: Այնուամենայնիվ, ՄԻԵԴ-ը արձանագրում է, որ սա բացարձակ իրավունք չէ. Դատարանը ընդգծում է, որ ցանկացած ձևի անհանդուրժողականության դեմ պայքարը հանդիսանում է մարդու իրավունքների պաշտպանության բաղկացուցիչ մաս: Կարևոր է, որպեսզի քաղաքական գործիչները խուսափեն իրենց հրապարակային ելույթներում այնպիսի մեկնաբանություններ տարածելուց, որոնք, հավանաբար, կխթանեն անհանդուրժողականությունը³⁸:

Մեկ այլ գործով, որտեղ դիմումատուն Թուրքիայում գործող քաղաքական գործիչ էր, ՄԻԵԴ-ը նշել էր³⁹, որ դիմումատուի արտահայտությունները չեն հրահրում բռնություն, զինված դիմադրություն կամ ապստամբություն, հետևաբար՝ չեն կարող բնութագրվել որպես ատելության խոսք՝ այդպիսով լինելով արտահայտման ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափ հիմք: Դատարանի գնահատմամբ սա էական պայման է, որպեսզի գնահատվի պետության կողմից նշված իրավունքի սահմանափակման իրավաչափությունը:

• Արտահայտության տարածումը և հնարավոր ազդեցությունը

ՄԻԵԴ-ը մատնանշում է նաև արտահայտության տարածման և հնարավոր ազդեցության կարևորությունը: Հայտարարության հավանական ազդեցությունը չափելու համար Դատարանը մասնավորապես հաշվի է առնում արտահայտության ձևը

³⁴ Case of *Féret v. Belgium*, Application No. 15615/07, judgment of 16 July 2009, § 63:

³⁵ Case of *Wingrove v. the United Kingdom*, Application No. [17419/90](#), judgment of 25 November 1996, § 58:

³⁶ Case of *Feldek v. Slovakia*, Application No. [29032/95](#), judgment of 12 July 2001, § 83:

³⁷ Case of *Incal v. Turkey*, Application No. [22678/93](#), judgment of 9 June 1998, § 46:

³⁸ Case of *Erbakan v. Turkey*, § 64:

³⁹ Case of *Han v. Turkey*, Application No. [50997/99](#), judgment of 13 September 2005, § 32:

և դրա տարածման համար օգտագործվող միջոցը, ինչպես նաև այն համատեքստը, որտեղ անձը արել է այդ հայտարարությունը:

5. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Եվրոպայի խորհրդի անդամ առանձին երկրների փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է այն մասին, որ ատելության խոսքի վերաբերյալ միջազգայնորեն ընդունված մոտեցումներ չկան, և յուրաքանչյուր երկրում՝ կախված պատմական, սոցիալական կամ այլ առանձնահատկություններից, կան ատելության խոսքի բնորոշման վերաբերյալ առանձնահատուկ դրսևորումներ: Չնայած այդ առանձնահատկություններին՝ ՄԻԵԴ պրակտիկային համապատասխան, կան նաև ընդհանուր գծեր, որոնք բնորոշ են բոլոր երկրներին՝

- խոսքը (կարող է դրսևորվել նաև այլ ձևերով, օրինակ՝ նկարի, գրքի, ֆիլմի և այլնի), որն իր մեջ պարունակում է ատելություն կամ դրդում է ատելության, պետք է հնչեցված լինի հրապարակայնորեն,
- դատապարտելի է խտրականության արգելքի հանգամանքներով պայմանավորված ատելության խոսքը (օրինակ՝ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկ կամ սոցիալական ծագումով և այլնով) և մարդկության դեմ իրականացված պատմականորեն ճանաչված հանցագործությունների ժխտումը (օրինակ՝ Հոլոքոստի),
- խոսքը պետք է ունենա բռնության հրարելու կամ դրդելու նպատակ:

5.1. Ավստրիա

Ավստրիայի քրեական օրենսգրքի 283-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է սահմանված հրապարակայնորեն հասարակական կարգը խանգարելու ունակ ձևով կամ հասարակության լայն զանգվածներին ընկալելի ձևով եկեղեցու, կրոնական կամ ցանկացած այլ խմբի նկատմամբ՝ կախված ռասայից, մաշկի գույնից, կրոնից կամ գաղափարախոսությունից, ազգությունից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, սեռից, տարիքից, սեռական կողմնորոշումից կամ նման խմբի պատկանելու հանգամանքով պայմանավորված բռնությանը հրահրելու կամ դրդելու համար⁴⁰:

⁴⁰ https://www.legislationline.org/download/id/8548/file/Austria_CC_1974_am122019_de.pdf:

Ավստրիայի դատարանների ատելության խոսքի վերաբերյալ գործերով դատական պրակտիկայից կարելի է առանձնացնել հետևյալ փաստերը և դրանց վերաբերյալ դատարանի կողմից տրված մեկնաբանությունները⁴¹.

- Հրահրումը պետք է ունակ լինի վտանգելու հասարակական կարգը. Հասարակական կարգը մեկնաբանվում է լայն և ներառում է քաղաքական, տնտեսական և հասարակական կարգերը: Յուրաքանչյուր անգամ դատարանը պետք է կոնկրետ գործով գնահատի անձի արարքը՝ հասարակական կարգը վտանգելու ունակության տեսանկյունից: Այնուամենայնիվ, պարտադիր չէ, որպեսզի արգելված արարքի կատարման արդյունքում առաջանա իրական վտանգ, կամ դրա արդյունքում կատարվի օրենքով արգելված գործողություն:
- Հրահրումը պետք է փաստացի ձևով ընկալելի լինի հասարակության լայն զանգվածի համար: Գերագույն դատարանի պրակտիկայից հետևում է, որ հասարակության լայն զանգվածը դա 30 և ավելի անձի կողմից համապատասխան գործողության ընկալումն է:
- Պարտադիր չէ, որպեսզի հրահրում և հասարակության կողմից դրա ընկալումը տեղի ունենա միաժամանակ: Քրեական օրենսգրքի նորմերը տարածվում են ոչ միայն մեծ լսարանի առջև ելույթների համար, այլև նամակներ կամ այլ հրապարակումներ անելու, թռուցիկներ տարածելու կամ պաստառները հանրային տարածքներում տեղադրելու համար: Երբ հաղորդագրությունը նախատեսվում է գաղտնի լինել (օրինակ՝ մերձավոր հարազատների համար), «հասարակության լայն» չափանիշը չի բավարարվում, քանի դեռ այդ գաղտնիությունը «օբյեկտիվորեն երաշխավորված է»:
- Հրահրումը կարող է իրականացվել արտահայտման տարբեր ձևերի միջոցով: Դա կարող է իրականացվել ինչպես բառերի, այնպես էլ, օրինակ՝ մնջադախի, նկարների և ֆիլմերի միջոցով:

5.2. Լեհաստան

Ատելության խոսքը կարգավորվում է Լեհաստանի քրեական օրենսգրքի⁴² մի քանի հոդվածներով.

- Հոդված 119, մաս 1.

⁴¹ <https://www.article19.org/wp-content/uploads/2018/09/Austria-Responding-to-Hate-Speech-.pdf>:

⁴² <https://supertrans2014.files.wordpress.com/2014/06/the-criminal-code.pdf>:

Յուրաքանչյուր ոք, ով բռնություն է կիրառում կամ բռնության կոչ է անում անձի կամ անձանց խմբի նկատմամբ ազգային, էթնիկական, քաղաքական կամ կրոնական հողի վրա, կամ կրոնական համոզմունքի բացակայության պատճառով, ենթակա է ազատագրկման երեք ամսից մինչև հինգ տարի ժամկետով:

- *Հոդված 256, մաս 1.*

Յուրաքանչյուր ոք, ով հրապարակայնորեն աջակցում է ֆաշիստական կամ պետական այլ տոտալիտար համակարգի, կամ հրահրում է ատելություն ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական հանգամանքով հանգամանքով պայմանավորված կամ կրոնական համոզմունքներ չունենալու համար, ենթակա է պատժի տուգանքի կամ ազատագրկման ձևով մինչև երկու տարի ժամկետով:

- *Հոդված 257.*

Յուրաքանչյուր ոք, ով հրապարակայնորեն վիրավորում է անձանց խմբի կամ անձի ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական պատկանելության կամ կրոնական համոզմունքներ չունենալու պատճառով կամ այդ հանգամանքներով պայմանավորված խախտում է այլ անձի անձնական անձեռնմխելիությունը, ենթակա է ազատագրկման ձևով պատժի մինչև 3 տարի ժամկետով:

Վերոհիշյալ կարգավորումներն արժանացել են քննադատության, մասնավորապես՝ անձի դիտավորությունը որպես հանցակազմի տարր չդիտարկելու համար⁴³:

Այնուամենայնիվ, Լեհաստանի քրեական օրենսգրքի ընդհանուր դրույթներով նախատեսված են նորմեր, որոնք իրավակիրառը պետք է հաշվի առնի իր նշված նորմերի կիրառման դեպքում: 115-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձի կողմից իրականացված իրավախախտման հետևանքով առաջացած սոցիալական վնասը գնահատելիս *inter alia* հաշվի է առնվում իրավախախտի դիտավորությունը և նպատակը:

Լեհաստանի Սահմանադրական դատարանը, քննելով քրեական օրենսգրքի 256.1 հոդվածը, մասնավորապես՝ «ատելության հրահրում» եզրույթը, նշել է, որ դատարանները, մեկնաբանելով քրեական օրենսգրքի 256.1 հոդվածը, պետք է հաշվի

⁴³ Poland: Responding to ‘hate speech’, ARTICLE 19, 2018 (<https://www.article19.org/wp-content/uploads/2018/04/Poland-Hate-Speech.pdf>), էջ 20:

առնեն Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով երաշխավորված կարծիքի արտահայտման ազատությունը: Սահմանադրական դատարանը նաև ընդգծել է, որ չնայած ազգային, էթնիկական, ռասայական, կրոնական հիմքով ատելության խոսքի քրեականացումը սահմանափակում է կարծիքի արտահայտման ազատությունը, այն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում հասարակական կարգի պահպանման համար⁴⁴:

Լեհաստանի Գերագույն դատարանը, անդրադառնալով Քրեական օրենսգրքի 256.1-րդ հոդվածով սահմանված ատելության հրահրում եզրույթին, նշել է, որ դա վերաբերում է արտահայտությանը, որը հրահրում է խիստ ատելություն, զայրույթ, անհանդուրժողականություն կամ նույնիսկ թշնամություն ընդդեմ անձի, անձանց կամ կրոնական խմբի նկատմամբ, կամ որոնք իրենց ձևի միջոցով պահպանում և ունենում են այդպիսի բացասական վերաբերմունքներ և դրանով իսկ շեշտում են ազգի առանձնահատուկ և արտոնյալ դիրքը կամ էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի գերակայությունը⁴⁵:

5.3. Բուլղարիա

Բուլղարիայի քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի համաձայն.

Յուրաքանչյուր ոք, ով խոսքի, մամուլի կամ այլ լրատվամիջոցների միջոցով, էլեկտրոնային տեղեկատվական համակարգերով կամ այլ ձևով տարածում կամ հրահրում է խտրականություն, բռնություն կամ ատելություն ռասայական, ազգային պատկանելության կամ էթնիկ ծագման հիմքով, պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով և տուգանքով՝ 5000 մինչև 10,000 բուլղարական լև⁴⁶, ինչպես նաև հանրային պարսավանքով⁴⁷:

5.4. Խորվաթիա

Խորվաթիայի քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն⁴⁸՝ յուրաքանչյուր ոք, ով տպագիր մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության, համացանցի միջոցով, հանրային վայրերում կամ այլ կերպ հանրայնորեն հրահրում կամ հանրությանը հասանելի է դարձնում նկարներ կամ այլ նյութեր, որոնք դրդում են

⁴⁴ Judgement of the Constitutional Tribunal of 25 February 2014, ref. no. SK 65/12:

⁴⁵ Decision of the Supreme Court of 5 February 2007, ref. no. IV KK 406/06:

⁴⁶ 1 լևը հավասար է մոտավորապես 270 ՀՀ դրամ:

⁴⁷ https://www.legislationline.org/download/id/8395/file/Bulgaria_Criminal_Code_1968_am2017_ENG.pdf:

⁴⁸ https://www.legislationline.org/download/id/7896/file/Croatia_Criminal_Code_2011_en.pdf:

հանցագործության կամ ատելության անձանց խմբի կամ նման խմբի անդամի նկատմամբ՝ կախված նրանց ռասայից, կրոնից, ազգային կամ էթնիկ պատկանելությունից, ծագումից, մաշկի գույնից, սեռից, սեռական կողմնորոշումից, հաշմանդամությունից կամ այլ հանգամանքներից, պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը 3 տարի ժամկետով:

325-րդ հոդվածի 2-րդ մասով պատասխանատվություն է սահմանվում ցեղասպանության, ագրեսիայից բխող հանցագործությունների, մարդկության դեմ իրականացված կամ պատերազմական հանցագործությունների արդարացման, հերքման համար:

5.5. Չեխիա

Չեխիայի քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

Յուրաքանչյուր ոք, ով հրապարակայնորեն հրահրում է ատելություն ցանկացած ազգի, ռասայի, էթնիկ խմբի, կրոնի կամ այլ խումբ անձանց նկատմամբ կամ հրահրում է նրանց անդամների իրավունքների սահմանափակման, պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով:

Նշված հոդվածի 3-րդ մասով նախատեսված է ծանրացնող հանգամանք եթե՝

- անձը վերոհիշյալ արարքները կատարել է մամուլի, ֆիլմի, ռադիոյի, հեռուստատեսության, համացանցի կամ այլ համանման արդյունավետ եղանակով,
- անձը ակտիվորեն մասնակցում է այնպիսի խմբի, կազմակերպության կամ ասոցիացիայի գործունեությանը, որը խթանում է խտրականություն, բռնություն կամ ռասայական, էթնիկական, դասակարգային, կրոնական կամ այլ բնույթի ատելություն:
- Նշված դեպքերում նախատեսված է ազատազրկում՝ 6 ամսից մինչև 3 տարի ժամկետով:

Քրեական օրենսգրքի 405-րդ հոդվածով սահմանված է պատասխանատվություն ցեղասպանության ժխտման, արդարացման և հավանության արժանացնելու համար:

5.6. Գերմանիա

Քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասով արգելվում է հասարակության անդորրը խախտելու ունակ ձևով ատելության, բռնության և խտրական վերաբերմունքի

հրահրումը ազգային, ռասայական, կրոնական խմբի կամ էթնիկ ծագմամբ տարբերվող խմբի դեմ:

130-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական պատասխանատվություն է սահմանված տպագիր մամուլի միջոցով հոդվածի 1-ին մասում նախատեսված արարքները կատարելու համար, ինչպես նաև այդ նյութերը ռադիոյի, լրատվամիջոցների կամ այլ հաղորդակցության միջոցով տարածելու համար:

Գերմանիայի քրեական օրենսգրքի⁴⁹ 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առնում պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները, ի թիվս այլնի՝ նաև հանցագործի նպատակը և դիտավորությունը:

6. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

- Կարծիքի ազատության իրավունքը հանդիսանում է ինչպես ժողովրդավարական պետության հիմնասյուներից մեկը, այնպես էլ յուրաքանչյուր անձի զարգացման կարևորագույն նախադրյալ: Սակայն, կարծիքի ազատության իրավունքի չարաշահման և այդ իսկ պատճառով՝ դրա սահմանափակման իրավաչափ հիմքերից մեկն «ատելության խոսքն» է:
- Ատելության խոսքն իր տարբեր դրսևորումներով արգելված է Եվրոպայի խորհրդի անդամ մի շարք երկրներում և որի համար նախատեսվում է անգամ քրեական պատասխանատվություն:
- Խնդրահարույց է, սակայն, այն հանգամանքը, որ չկա «ատելության խոսք» հասկացության վերաբերյալ միջազգայնորեն ճանաչված սահմանում, ինչի արդյունքում ատելության խոսքի լայն մեկնաբանությունը կարող է հանգեցնել խոսքի ազատության անհամաչափ սահմանափակման:
- ՀՀ քրեական օրենսգրքի 226.2-րդ հոդվածի ուսումնասիրությունից, որով քրեական պատասխանատվություն սահմանվեց բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու համար (ատելության խոսք) կարող ենք եզրահանգել, որ այն համապատասխանում է ՀՀ Սահմանադրությամբ սահմանված համաչափության (հոդված 78) և որոշակիության (հոդված 79) սկզբունքներին:

⁴⁹ https://www.legislationline.org/download/id/6115/file/Germany_CC_am2013_en.pdf:

- Կարևոր է, սակայն, այն հանգամանքը, որ օրենսդրական այս դրույթը կիրառվի միջազգային փորձին համահունչ և իշխանության կողմից չօգտագործվի որպես անհամաչափ միջոց քաղաքական ընդդիմախոսներին լռեցնելու համար: Այս ամենի մասին հետևություն հնարավոր կլինի անել օրենքի կիրարկման որոշակի պրակտիկայից հետո:
- ՄԻԵԴ-ն իր պրակտիկայում հստակ ընդգծել է, որ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ և խտրականության արգելքի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության խոսքը դուրս է Կոնվենցիայով երաշխավորված պաշտպանությունից:
- ՄԻԵԴ-ն արձանագրել է նաև, որ կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով և կարող է հետապնդել պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակ:
- ՄԻԵԴ-ը, քննելով արտահայտման ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափությունը համաչափության տեսանկյունից, ի թիվս այլնի՝ կարևորել է նաև անձի դիտավորությունը, անձի դիրքը հասարակության մեջ, արտահայտված խոսքի բովանդակությունը և այն համատեքստը, որտեղ արտահայտվել է այդ խոսքը:
- Միջազգային փորձի ուսումնասիրությունը միաժամանակ վկայում է, որ ատելության խոսքի ծայրահեղ դրսևորումների միայն քրեականացումը չի կարող դիտվել որպես խնդրի լուծում: Ատելության խոսքի դեմ արդյունավետ պայքարի համար անհրաժեշտ են համալիր լուծումներ, օրինակ՝ իրականացնել իրազեկման աշխատանքներ, լրատվության միջոցների հետ պարբերաբար քննարկումների միջոցով նպաստել ատելության խոսքի դրսևորման դեպքերի նվազեցմանը, հանրային գործիչների հրապարակային ելույթներում բացառել անհանդուրժողականություն պարունակող ցանկացած խոսքի դրսևորում:

*Վերլուծությունը պատրաստվել է «Լոյս» հիմնադրամի իրավաբան-փորձագետ
Հովհաննես Օդաբաշյանի կողմից*

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: